09.07. վարչական խորհուրդ

Դպրոցական բակերի բարեկարգման աշխատանքների
և ոռոգման նոր ցանցերի մասին (Արտեմ Խաչատրյան)

Աշխատանքի ուղղությունները (գործառույթները) **2013-2014** ուստարում

Արտեմ Խաչատրյան

Ռուդիկ Սահակյանց

Դպրոցական բակերի բարեկարգման աշխատանքների
և ոռոգման նոր ցանցերի մասին

1.Հիմնական դպրոց - Ոռոգման նոր ցանցի աշխատանքները ամբողջովին կավարտվեն մինչև 13.07.2013թ: Անմիջապես սկսվում է տարածքի բարեկարգման թերի աշխատանքները, այդ թվում ցանցապատում, հողահարթեցում,խիճ: Նախապատրաստություն պտղատու ծառերի աշնանային ծառատունկին:

2.Նոր դպրոց - Սովորողների աշխատանքային ջոկատի ուժերով սկսում ենք ոռոգման համար անհրաժեշտ հողային աշխատանքները: Պլանավորվում է մինչև հուլիսի 20 նոր ոռոգման համակարգ: Ընդհանուր տարածքի բարեկարգում:

3.Մայր դպրոցում, Դպրոց պարտեզում և Արհեստների դպրոցում ոռոգման համակարգերը բավարար վիճակում են:

4.Մայր դպրոցի մարզադաշտային հատվածի բարեկարգման աշխատանքների ավարտ՝ հողահարթեցում, խճապատում, ցանցապատում: Առաջարկում եմ նաև մեծ ֆուտբոլի դաշտը վերածել պտղատու այգու ուսումնաարտադրական նպատակով:

5.Նոր դպրոցի և Արհեստների դպրոցի միջև ընկած տարածքի՝ Կանաչ կասկադի աշխատանքների մեկնարկ-այգի,խաղահրապարակ կարմիր ավազով և այլն:

Վերը նշված աշխատանքները ավարտել մինչև սեպտեմբերի մեկը: Սեպտեմբերի մեկից կմեկնարկի աշնանային էտի և աշնանային ծառատունկի նախապատրաստական և բուն աշխատանքները:

Աշխատանքի ուղղությունները (գործառույթները) **2013-2014** ուստարում

Ռ.Սահակյանց

1.Կրթահամալիրի կաթսայատների անվտանգ և անխափան աշխատանք, համապատասխան փաստաթղթերի վավերացում, կնքում, հաստատում:

2.Խոտանման ենթակա գույքի և սարքավորումների հավաքագրում, արձանագրությունների կազմում, գույքագրում:

3.Պետական, տեղական ինքնակառավարման մարմինների հետ կապ:

4.Կրթական օբյեկտների պահպանություն, գիշերային հերթապահների աշխատանքների վերահսկում:

5.Գազի, խմելու և ոռոգման ջրի, էլ.էներգիայի, կոյուղու, աղբահանության աշխատանքների հսկողություն:

6.Քննական հանձնաժողովների աշխատանքների ապահովման աջակցում:

7.Ամառային և ձմեռային ճամբարների տեղանքի հետ կապված հարցեր:

Ա.Խաչատրյան

1.Գնումներ

2.«Մեր բակը պարտեզ»

3.Սննդի կազմակերպման աջակցություն

4.Կոմունալ ծառայությունների (գազ, լույս, ջուր և այլն) ներքին վերահսկողություն:

5.Վարձակալական տարածքներ՝ վարձավճար, հաշվիչներ և այլն: